

ՍԱԼԴՈՒՋՆ ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

2008թ. նոյեմբերի 27-ի վճիռը

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. Գործի հանգամանքները

11. Դիմողը ծնվել է 1984 թվականի փետրվարի 2-ին և բնակվում է Իզմիրում:

A. Դիմողի ձերբակալումն ու կալանավորումը

12. 2001 թվականի մայիսի 29-ին, մոտավորապես ժամը 22.15-ին դիմողը ձերբակալվել է Իզմիրի անվտանգության վարչության ահաբեկչության դեմ պայքարի բաժնի աշխատակիցների կողմից այն կասկածանքի հիման վրա, որ վերջինս մասնակցել է ՔԱԿ (Քուրդական աշխատավորական կուսակցություն) կոչվող անօրինական կազմակերպության օգտին իրականացվող ապօրինի ցույցին: Դիմողը կասկածվել է նաև 2001 թվականի ապրիլի 26-ին Բոնովայի կամրջից անօրինական պաստառ կախելու մեջ:

13. 2001 թվականի մայիսի 30-ին, մոտավորապես ժամը 12.30-ին դիմողը տարվել է Աթաթուրքի ուսումնահետազոտական հիվանդանոց, որտեղ բժշկի կողմից ենթադրվել է հետազոտության: Բժշկական եզրակացության մեջ նշվել է, որ նրա մարմնի վրա առկա չէ վատ վերաբերմունքի որևէ հետք:

14. Հետևաբար, մոտավորապես ժամը 13.00-ին դիմողը ենթարկվել է հարցաքննության ահաբեկչության դեմ պայքարի բաժնում՝ փաստաբանի բացակայությամբ: Համաձայն ձերբակալված անձին իր իրավունքները բացատրող արձանագրության, որն ստորագրվել է դիմողի կողմից, նա տեղեկացվել է իր դեմ առկա կասկածանքների, ինչպես նաև լռելու իր իրավունքի մասին: Իր հայտարարության մեջ դիմողը ընդունել է, որ ներգրավված է եղել ԺԴԿ-ի (Halkin Demokrasi Partisi - Ժողովրդական դեմոկրատական կուսակցություն) երիտասարդական ճյուղում: Նա նշել է որոշ անձանց անուններ, ովքեր աշխատել են Բոնովայի շրջանային գրասենյակի երիտասարդական ճյուղում: Նա բացատրել է, որ եղել է երիտասարդական ճյուղի մամուլ և հրատարակչական հարցերով աշխատակցի օգնականը, ինչպես նաև եղել է Օսմանգազի շրջանի պատասխանատու: Ապա նա նշել է, որ իր աշխատանքի մի մասն է եղել երիտասարդական ճյուղի այլ անդամների պարտականությունները սահմանելը: Նա ընդունել է, որ ներկա է եղել մոտավորապես վաթսույն ցուցարար, և որ խումբը կոչեր է բացականչել հօգուտ Օջալանի և ՔԱԿ-ի: Նա անմիջապես ձերբակալվել է: Նա նաև ընդունել է, որ պաստառի վրա գրել է «Կեցցե առաջնորդ Ապոն», ինչը 2001 թվականի ապրիլի 26-ին

կախել է կամրջից: Ոստիկանությունը վերցրել է դիմողի ձեռագրի նմուշը և այն ուղարկել ոստիկանության լաբորատորիա փորձաքննության:

15. 2001 թվականի հունիսի 1-ին Իզմիրի քրեական ոստիկանության լաբորատորիան կազմել է արձանագրություն դիմողի ձեռագիրը պաստառի վրա եղած ձեռագրի հետ համեմատելու արդյունքում: Այն եզրակացրել է, որ չնայած դիմողի ձեռագրի որոշ հատկանիշներ ունեն նմանություններ պաստառի ձեռագրի հետ, հնարավոր չէ հաստատել՝ արդյոք պաստառի վրա առկա գիրը փաստացի պատկանում է նրան:

16. 2001 թվականի հունիսի 1-ին, ժամը 23.45-ին դիմողը կրկին հետազոտվել է բժշկի կողմից, ով նշել է, որ նրա մարմնի վրա չկան վատ վերաբերմունքի հետքեր:

17. Նույն օրը դիմողը բերվել է դատախազի և համապատասխանաբար, գործը քննող դատավորի մոտ: Դատախազին նա բացատրել է, որ չի եղել որևէ քաղաքական կուսակցության անդամ, սակայն մասնակցել է ԺԴԿ-ի որոշ գործընթացների: Նա ժխտել է իր կողմից որևէ անօրինական պաստառ պատրաստելը կամ 2001 թվականի մայիսի 29-ի ցույցին իր մասնակցելը: Նա հայտարարել է, որ Դոգանլարի կողմից այցելելիս է եղել իր ընկերոջը, երբ ձերբակալվել է ոստիկանության կողմից: Դիմողը հայտարարություն է ներկայացրել նաև գործը քննող դատարանին, որում հրաժարվել է ոստիկանությունում տրված իր ցուցմունքից, նշելով, որ այն կորզվել է ճնշման ներքո: Նա բողոքել է, որ ոստիկանությունում գտնվելու ընթացքում իրեն ենթարկել են ծեծի և վիրավորանքի: Նա կրկին ժխտել է որևէ ապօրինի գործընթացի մեջ իր ներգրավված լինելը և բացատրել է, որ 2001 թվականի մայիսի 29-ին նա գնացել է Դոգանլարի շրջան իր ընկերոջն այցելելու նպատակով և ինքը չի եղել կոչեր անող խմբի մեջ: Հարցաքննության ավարտից հետո գործը քննող դատավորը կայացրել է կալանավորման մասին որոշում՝ հաշվի առնելով հանցագործության բնույթը, որում կասկածվում էր դիմողը, և ցուցմունքը: Ապա դիմողին թույլ է տրվել հանդիպել փաստաբանի:

B. Դատական քննությունը

18. 2001 թվականի հուլիսի 11-ին Իզմիրի պետական անվտանգության գործերով դատարանում դատախազը մեղադրանք է ներկայացրել դիմողի և ութ այլ կասկածյալների դեմ ՔԱԿ-ին օժանդակելու և մասնակցելու համար, հանցագործություն, որը նախատեսված է Քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածով և Ահաբեկչության կանխարգելման ակտով (թիվ 3713 օրենք):

19. 2001 թվականի հուլիսի 16-ին Պետական անվտանգության գործերով դատարանն իրականացրել է դատական նիստի նախպատրաստումը: Այն որոշել է, որ դիմողի կալանքը պետք է երկարացվի, ինչպես նաև մեղադրյալները պետք է հրավիրվեն իրենց պաշտպանությունը պատրաստելու:

20. 2001 թվականի օգոստոսի 28-ին Պետական անվտանգության գործերով դատարանը հրավիրել է իր առաջին նիստը՝ դիմողի և նրա փաստաբանի մասնակցությամբ: Նա լսել է անձամբ դիմողի կողմից տրվող ցուցմունքը, ով ժխտել է իր դեմ առկա մեղադրանքները: Նա նաև ժխտել է ոստիկանությունում տված ցուցմունքը՝ հայտարարելով, որ այն իրենից կորզվել է ճնշման ներքո: Նա բացատրել է, որ կալանքի տակ գտնվելու ընթացքում ոստիկանության աշխատակիցները հրամայել են իրեն արտագրել պաստառի վրա գրված բառերը: Նա նաև

հայտարարել է, որ սկանառես է եղել 2001 թվականի մայիսի 29-ին տեղի ունեցած իրադարձություններին, այդուհանդերձ, ինքը չի մասնակցել ցույցին, ինչպես որ պնդում է մեղադրանքի կողմը: Փոխարենը նա այդ վայրի հարևանությամբ այցելելիս է եղել Օզկան անունով իր ընկերոջը: Նա նաև ժխտել է 2001 թվականի մայիսի 26-ին կամրջից պայրիմի պաստառ կախելը:

21. Հաջորդ միստին, որը տեղի է ունեցել 2001 թվականի հոկտեմբերի 25-ին, ներկա են եղել և դիմողը, և նրա փաստաբանը: Դատարանը լսել է նաև մյուս մեղադրյալներին, որոնք ևս ժխտել են 2001 թվականի մայիսի 29-ի ապրիմի ցույցին իրենց մասնակցությունը, ինչպես նաև հրաժարվել են նախկինում տրված իրենց ցուցմունքներից: Ապա մեղադրանքի կողմը պահանջել է դիմողին դատապարտել Քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածով, իսկ դիմողի փաստաբանը միջնորդել է ժամանակ տրամադրել դիմողի պաշտպանության փաստարկները ներկայացնելու համար:

22. 2001 թվականի դեկտեմբերի 5-ին դիմողը ներկայացրել է իր պաշտպանության փաստարկները: Նա ժխտել է իր դեմ առկա մեղադրանքները և խնդրել իրեն ազատ արձակել: Նույն օրը Իզմիրի Պետական անվտանգության գործերով դատարանը կայացրել է դատավճիռ: Այն արդարացրել է մեղադրյալներից հինգին, իսկ դիմողին և երեք այլ մեղադրյալների ճանաչել է մեղավոր և դատապարտել: Այն դիմողին դատապարտել է ազատազրկման չորս տարի և վեց ամիս ժամկետով, որը նվազեցվել է մինչև երկուսուկես տարվա, քանի որ դիմողը հանցագործությունը կատարելու պահին եղել է անչափահաս:

23. Դիմողին դատապարտելիս Պետական անվտանգության գործերով դատարանը հաշվի է առել դիմողի կողմից, համապատասխանաբար, ոստիկանությունում, դատախազին և գործը քննող դատավորին տրված ցուցմունքները: Այն հաշվի է առել նաև նրա հետ մեկտեղ մեղադրվողների կողմից դատախազին տրված ցուցմունքն առ այն, որ դիմողն իրենց մղել է մասնակցելու 2001 թվականի մայիսի 29-ի ցույցին: Դատարանը նկատել է, որ դիմողի հետ մեղադրվող անձինք ցուցմունք են տվել նաև առ այն, որ դիմողը մասնակցել է ցույցը կազմակերպելու գործընթացին: Ապա այն ուշադրություն է դարձրել փորձագետի եզրակացությանը, որում դիմողի ձեռագիրը համեմատվել է պաստառի վրա առկա ձեռագրի հետ, ինչպես նաև այն փաստին, որ համաձայն ոստիկանության կողմից կազմված ձեռքակալման արձանագրության՝ դիմողը գտնվել է ցուցարարների շարքում: Այն եզրակացրել է.

«...հաշվի առնելով այս նյութական փաստերը, դատարանը չի ընդունում դիմողի ժխտումը և գտնում է, որ դիմողի կողմից ոստիկանությունում արված խոստովանությունը հիմնավորված է»:

C. Բողոքարկում

24. 2002 թվականի հունվարի 2-ին դիմողի փաստաբանը բողոքարկել է Իզմիրի Պետական անվտանգության գործերով դատարանի դատավճիռը: Իր բողոքում նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների խախտում հայտարարելով, որ առաջին ատյանում իրականացված գործի քննությունը եղել է անարդար, և որ դատարանը պատշաճ կերպով չի գնահատել ապացույցները:

25. 2002 թվականի մարտի 27-ին Վճռաբեկ դատարանում Գլխավոր դատախազը գրավոր կարծիք է ներկայացրել Վճռաբեկ դատարանի իններորդ պալա-

տին, որում նշել է, որ Պալատը պետք է անփոփոխ թողնի Իզմիրի Պետական անվտանգության գործերով դատարանի դատավճիռը: Այս կարծիքը չի տրամադրվել ոչ դիմողին, ոչ էլ նրա ներկայացուցչին:

26. 2002 թվականի հունիսի 10-ին Վճռաբեկ դատարանի իններորդ պալատը, հաստատելով Իզմիրի Պետական անվտանգության գործերով դատարանի պատճառաբանությունը և ապացույցների գնահատականը, մերժել է դիմողի բողոքը:

II. Համապատասխան օրենսդրությունը և պրակտիկան

A. Ներպետական օրենսդրությունը

1. Կիրառման պահին գործող օրենսդրությունը

27. Նախկին Քրեական դատավարության օրենսգրքի (թիվ 1412) համապատասխան դրույթները, այն է՝ 135, 136 և 138-րդ հոդվածները, նախատեսում էին, որ քրեական հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող ցանկացած անձ ոստիկանություն բերվելու պահից ունի փաստաբան ունենալու իրավունք: 138-րդ հոդվածը հստակ սահմանում էր, որ անչափահասներին իրավաբանական օգնություն տրամադրելը պարտականություն էր:

28. Համաձայն 1992 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 3842 օրենքի 31-րդ մասի, որը բարեփոխումներ էր նախատեսում քրեական դատավարության օրենսդրության մեջ, վերը նշված դրույթները կիրառելի չեն եղել Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց նկատմամբ:

2. Վերջին փոփոխությունները

29. 2003 թվականի հուլիսի 15-ին թիվ 4928 օրենքով Պետական անվտանգության գործերով դատարանում իրականացվող քննությանը փաստաբան ունենալու՝ կասկածյալի իրավունքի սահմանափակումը վերացել է:

30. 2005 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ է մտել նոր Քրեական դատավարության օրենսգիրքը: Համաձայն նոր օրենսգրքի համապատասխան դրույթների (149 և 150-րդ հոդվածներ) յուրաքանչյուր ձերբակալված անձ ունի փաստաբան ունենալու իրավունք ոստիկանություն բերվելու պահից: Փաստաբանի հետ տեսակցություն ապահովելը պարտադիր է, եթե տվյալ անձն անչափահաս է կամ կասկածվում է առնվազն հինգ տարի առավելագույն ժամկետով ազատազրկմանը պատժվող հանցագործության կատարման մեջ:

31. Վերջապես, Առաքելչության կանխարգելման մասին օրենքի 10-րդ մասը (օրենք թիվ 3713), որի փոփոխությունները կատարվել են 2006 թվականի հունիսի 29-ին, նախատեսում է, որ ահաբեկչության հետ կապված հանցագործությունների դեպքում փաստաբան ունենալու իրավունքը կարող է հետաձգվել 24 ժամով՝ դատախազի որոշման հիման վրա: Այդուհանդերձ, այդ ընթացքում կասկածյալը չի կարող ենթարկվել հարցաքննության:

B. Համապատասխան միջազգային օրենսդրության նյութեր

1. Անչափահասների գործերով վարույթ

(a) Եվրոպայի խորհուրդ

32. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի հանձնարարականը (Rec (2003)20)՝ ընդունված 2003 թվականի սեպտեմբերի 24-ին Նախարարների ներկայացուցիչների 853-րդ հանդիպմանը որն ամռնչվում է անչափահասների հանցավորության հարցերի լուծման նոր ուղիներին և անչափահասների գործերով արդարադատության դերին, նախատեսում է հետևյալը.

«15. Դեռահասներին ձերբակալելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրանց՝ որպես անչափահաս, կարգավիճակին, նրանց տարիքին և նրանց խոցելիությանը, ինչպես նաև նրանց հասունության աստիճանին: Նրանք պետք է պատշաճ կերպով տեղեկացվեն իրենց իրավունքների և երաշխիքների մասին՝ լիովին ընկալելի միջոցով: Ոստիկանությունում հարցաքննվելիս նրանք, ըստ էության, պետք է ուղեկցվեն իրենց ծնողների/օրինական ներկայացուցիչների կամ այլ համապատասխան մեծահասակների կողմից: Նրանք նաև պետք է ունենան փաստաբանին և թշկին տեսակցելու իրավունք...»:

33. Անչափահասների հանցավորության նկատմամբ սոցիալական մոտեցումների առնչությամբ անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի հանձնարարականը (թիվ R(87)20)՝ ընդունված 1987 թվականի սեպտեմբերի 17-ին Նախարարների ներկայացուցիչների 410-րդ հանդիպմանը, նախատեսում է հետևյալը.

«խորհուրդ է տրվում անդամ պետությունների կառավարություններին անհրաժեշտության դեպքում վերանայել իրենց օրենսդրությունը և պրակտիկան՝ նպատակ ունենալով.

8. ամրապնդել անչափահասների իրավական դիրքերը համապատասխան գործընթացների միջոցով, ներառյալ ոստիկանությունում իրականացվող հարցաքննությունը, ճանաչելով, *inter alia*.

- փաստաբան ունենալու իրավունքը, ում անհրաժեշտության դեպքում կարող է պաշտոնապես նշանակել և վարձատրել պետությունը»:

(b) Միացյալ ազգերը

(i) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

34. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (CRC) 37-րդ հոդվածը՝ այնքանով, որքանով համապատասխան է, նախատեսում է հետևյալը.

«Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի ...

(d) ամազատության մեջ գտնվող յուրաքանչյուր երեխա ունենա իրավաբանական և այլ պատշաճ օժանդակության իրավունք, այդ թվում՝ նաև դատարանում կամ այլ իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի առջև իրեն ազատությունից զրկելու օրինականությունը վիճարկելու, ինչպես նաև մնալ ցանկացած գործողության առթիվ համապատասխան որոշում ստանալու իրավունք»

(ii) Երեխայի իրավունքների հանձնաժողովի կողմից 2007 թվականի ապրիլի 25-ին ընդունված թիվ 10 ընդհանուր բնույթի մեկնաբանությունը նախատեսում է հետևյալը.

«49. Անհրաժեշտ է երաշխավորել, որպեսզի երեխան ստանա պատշաճ օժանդակություն իր պաշտպանությունը նախապատրաստելիս և ներկայացնելիս: CRC չի պահանջում, որպեսզի երեխային տրամադրվի այնպիսի օժանդակություն, որը, բոլոր համգամանքները հաշվի առնելով, անհրաժեշտաբար իրավական չէ, սակայն այն պետք է լինի պատշաճ: Անդամ պետությունների հայեցողությամբ է թողնված որոշել, թե որքանով է այս օժանդակությունը տրամադրված, սակայն այն պետք է լինի անվճար...»:

52. Հանձնաժողովն առաջարկում է, որպեսզի անդամ պետությունները նախատեսել և կիրառեն ժամկետներ հանցագործությունը կատարելու և ոստիկանությունում հարցաքննություն իրականացնելու, երեխայի դեմ մեղադրանք ներկայացնելու առնչությամբ դատախազի (կամ այլ իրավասու մարմնի) որոշման, ինչպես նաև դատարանի կամ այլ իրավասու դատական մարմնի կողմից վերջնական դատավճռի և որոշման միջև ընկած ժամանակահատվածի համար: Այս ժամկետները պետք է լինեն առավել կարճ, քան չափահասների համար նախատեսված ժամկետները: Սակայն, միևնույն ժամանակ, անհապաղ որոշումները պետք է լինեն այնպիսի գործընթացի արդյունք, որի ընթացքում երեխայի նկատմամբ մարդու իրավունքները և իրավական երաշխիքները լիովին պահպանված են: Անհապաղ որոշում ընդունելու այս գործընթացում պետք է առկա լինի իրավական կամ այլ պատշաճ օժանդակություն: Դա չպետք է սահմանափակվի դատարանում կամ այլ դատական մարմնում վարույթի նկատմամբ, սակայն պետք է կիրառվի նաև մյուս բոլոր փուլերում՝ սկսած ոստիկանության կողմից երեխային հարցաքննելուց:

(iii) երեխայի իրավունքների առնչությամբ Միացյալ ազգերի հանձնաժողովի վերջնական դիտարկումները. Թուրքիա, 2001 թվականի հուլիսի 9 (CRC/C/15/Add. 152):

36. Այս տեքստի համապատասխան մասը նախատեսում է հետևյալը.

«66. Հանձնաժողովն առաջարկում է, որպեսզի անդամ պետությունը շարունակի վերանայել դեռահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը վերաբերող օրենսդրությունը և պրակտիկան՝ այն Կոնվենցիային, հատկապես դրա 37, 39 և 40-րդ հոդվածներին, ինչպես նաև այս ոլորտի համապատասխան այլ միջազգային չափանիշներին, ինչպիսիք են Միացյալ ազգերի Անչափահասների գործերով արդարադատության համար չափանիշ նվազագույն կանոններին (Պեկինյան կանոններ) և Միացյալ ազգերի Անչափահասների հանցավորության կանխարգելմանն ուղղված սկզբունքներին (Ռիադի սկզբունքներ) լիովին համապատասխանեցնելու նպատակով քրեական պատասխանատվության ենթարկելու նվազագույն տարիքը սահմանելու համար, նախատեսելով Անչափահասների գործերով դատարանի կողմից երաշխավորվող պաշտպանությունը մինչև 18 տարեկան բոլոր երեխաների նկատմամբ և ապահովելով այս օրենքի արդյունավետ կիրառումը՝ ստեղծելով անչափահասների գործերով դատարաններ յուրաքանչյուր շրջանում: Մասնավորապես, այն հիշեցնում է անդամ պետություններին, որ անչափահաս հանցագործներին պետք է անդրադառնալ առանց հապաղման՝ *incommunicado* կալանքից խուսափելու, նախնական կալանքը՝ որպես ծայրահեղ միջոց կիրառելու նպատակով, այն պետք է լինի հնարավորինս կարճաժամկետ և չպետք է լինի օրենքով նախատեսված ժամանակահատվածից ոչ երկար: Նախնական կալանքի այլընտրանքային միջոցները պետք է կիրառվեն ցանկացած ժամանակ, երբ դա հնարավոր է»:

2. Կալանքի տակ գտնվելու ընթացքում փաստաբանին տեսնելու իրավունքը

(a) Եվրոպայի խորհուրդը

(i) Նախարարների կոմիտեի կողմից ընդունված կանոնները

37. Կալանավորվածների նկատմամբ վերաբերմունքի չափանիշների նվազագույն կանոնների 93-րդ կանոնը (Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (73)5 բանաձև) նախատեսում է, որ «Դատվածություն չունեցող կալանավորվածը կալանավորվելուն պես պետք է իրավունք ունենա ընտրելու իր ներկայացուցչին...և հանդիպի իր փաստաբանին իր պաշտպանությունը կազմակերպելու և անձնական ցուցումներ նախապատրաստելու, ինչպես նաև տալու և ստանալու նպատակով: Իր միջնորդության հիման վրա այդ նպատակով նրան պետք է տրամադրվեն բոլոր անհրաժեշտ միջոցները:...Կալանավորվածի և նրա փաստաբանի հանդիպումները կարող են հսկվել, սակայն ոչ լսվել ուղղակի կամ անուղղակի կերպով ոստիկանության կամ հաստատության աշխատակցի կողմից»:

38. Դեռ աելին, Կալանավայրի եվրոպական կանոնների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ուղղված նախարարների կոմիտեի հանձնարարականը (Rec (2006)2)՝ ընդունված 2006 թվականի հունվարի 11-ին Նախարարների ներկայացուցչիների 952-րդ հանդիպման ժամանակ, որքանով որ առնչվում է նախատեսում է հետևյալը.

«Իրավաբանական խորհրդատվություն

23.1. Բոլոր կալանավորվածներն ունեն իրավաբանական խորհրդատվություն ստանալու իրավունք, իսկ կալանավայրի աշխատակիցները պետք է տրամադրեն համապատասխան միջոցներ նման խորհրդատվություն ստանալու ապահովելու համար:

23.2. Կալանավորվածները կարող են խորհրդակցել իրենց հաշվին, իրենց նախընտրած իրավաբանական խորհրդատուի հետ՝ ցանկացած իրավական հարցի շուրջ:

...

23.5. Դատական իշխանությունը բացառիկ դեպքերում կարող է սահմանափակել նման խորհրդատվությունը՝ լուրջ հանցագործության կատարումը կամ կալանավայրի անվտանգության և պաշտպանության եական խախտումները կանխելու նպատակով»:

(ii) Խոշտանգումները և աննարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխող եվրոպական հանձնաժողովը (CPT)

39. 2000 թվականին Թուրքիա այցելելուց հետո CPT-ն 2001 թվականի Երեյնբերգի 8-ին հրատարակել է իր հաշվետվությունը (CPT/Inf (2001)25), համաձայն որի.

«61. Չնայած վերջին տարիներին օրենսդրությունում կատարված բազմաթիվ փոփոխություններին՝ պահպանվում են որոշ թերություններ վատ վերաբերմունքի դեմ պաշտոնական երաշխիքների հարցում: Չնարավոր է, որ անենակարևոր թերությունն այն է, որ Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա խմբակային հանցագործությունների մեջ առկա կասկածանքի հիման վրա ձերբակալված անձինք շարունակում են գրկված լինել փաստաբան ունենալու իրավունքից իրենց կալանքի առաջին չորս օրվա ընթացքում: Ապա, չնայած ավելի վաղ արված հակառակ պնդմանը, Թուրքիայի իշխանությունները 1999 թվականի փետրվար/մարտ ամիսներին կայացած այցի առնչությամբ կազմված հաշվետվության առնչությամբ

իրենց տրված պատասխանում պարզաբանել են, որ նման անձանց թույլ չի տրվել իրենց կալանքի առաջին չորս օրերի ընթացքում տեղեկացնել ազգականներին իրենց վիճակի մասին: Նման incamunicado կալանքը կարող է միայն նպաստել վատ վերաբերմունքի կիրառմանը:

Այդ իսկ պատճառով, CPT-ն մեկ անգամ ևս կրկնում է իր հանձնարարականն առ այն, որ իրավակիրառ մարմինների կողմից ազատությունից զրկված բոլոր անձանց, ներառյալ Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա հանցագործությունների մեջ կասկածվողների համար, պետք է ապահովվի ձերբակալման պահից փաստաբան ունենալու իրավունքը: CPT-ն ընդունում է, որ ոստիկանության կողմից իրականացվող քննության օրինական շահերը պաշտպանելու նպատակով բացառիկ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել որոշակի ժամանակ հետաձգել ձերբակալվածի ցանկությանը ընտրված փաստաբանի տեսակցությունը նրա հետ, այդուհանդերձ, նման դեպքերում պետք է ապահովվի մեկ այլ անկախ փաստաբանի ներկայությունը»:

Վերը նշված հանձնարարականի կիրառումը կպահանջի իրավական միջոցների իրականացում: Այդուհանդերձ, միևնույն ժամանակ պետք է ձեռնարկվեն անհապաղ քայլեր, որպեսզի ապահովվի գործող իրավական դրույթների կիրառումը: Իրոք, 2000 թվականի հուլիսի ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը հստակորեն ցույց է տալիս, որ նույնիսկ ձերբակալման առաջին չորս օրվա միջ հետո Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց՝ փաստաբան ունենալու իրավունքի ապահովումն ավելի շուտ բացառություն է, քան կանոն: CPT առաջարկում է, որպեսզի պաշտոնյաները, որոնք պատասխանատու են մոնիթորինգի ընթացքի նախկինում նշված համապատասխանության ներքո իրականացվող հսկողության և հետազոտման համար, համապատասխան ցուցումներ ունենան հատուկ ուշադրություն դարձնելու այն հանգամանքին, արդյոք, Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա խմբակային հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձինք տեղեկավարում են իրենց կալանավորման առաջին չորս օրը լրանալուց հետո փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին, թե՛ ոչ, և արդյոք նրանց համար ստեղծվում են այդ իրավունքն արդյունավետորեն իրականացնելու պայմաններ»:

40. CPT-ն կրկին այցելել է Թուրքիա 2001 թվականի սեպտեմբերին և 2002 թվականի ապրիլի 24-ի իր հաշվետվության մեջ (CPT/Inf (2002)8) նշել է հետևյալը.

«12. Պետական անվտանգության գործերով դատարանի կազմակերպած դատական վարույթների մասին օրենքի 16-րդ հոդվածում կատարված փոփոխությունները նույնպես ցույց տվեցին, որ տեղի են ունեցել բարեփոխումներ՝ կապված Պետական անվտանգության գործերով դատարանի քննությանը ենթակա խմբակային հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց՝ փաստաբան ունենալու իրավունքի հետ: Նման անձանց համար փաստաբան ունենալու իրավունքը դառնում է օպերատիվ այն բանից հետո, երբ դատախազը գրավոր որոշում է կայացնում ոստիկանությունում կալանքի ժամկետը 48 ժամից ավելի դարձնելու մասին, այլ կերպ ասած, նախկին օրենքով նախատեսված չորս օրվա փոխարեն նրանք այժմ փաստաբան ունենալու իրավունք չունեն ընդամենը երկու օրվա ընթացքում:

Ողջունելով այս առաջընթաց քայլը՝ CPT-ն ցավում է, որ Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա խմբակային հանցագործությունների համար ձերբակալված անձանց համար փաստաբան ունենալու իրավունքը չի երաշխավորվում նրա ձերբակալման հենց սկզբից (և հենց այստեղից էլ այս կապակցությամբ

նրանց իրավունքները մեկ շարքում են դասվում սովորական քրեական գործերով կասկածյալների իրավունքների հետ): CPT-ն հավատում է, որ թուրքական իշխանությունները մոտ ապագայում կկիրառեն Հանձնաժողովի վաղուց գոյություն ունեցող հանձնարարականն առ այն, որ իրավակիրառ մարմինների կողմից ազատությունից զրկված բոլոր անձինք, ներառյալ Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց կտրվի փաստաբան ունենալու իրավունք իրենց ձերբակալման հենց սկզբից»:

...

41. Ավելի վաղ հղում է կատարվել վերջերս տեղի ունեցած դրական օրենսդրական փոփոխություններին՝ կապված փաստաբան ունենալու իրավունքի և ձերբակալման մասին ազգականներին տեղեկացնելու իրավունքի հետ (12–14 կետեր): Ապա նրանք բարեփոխել են արդեն իսկ տպավորիչ իրավական և կարգավորիչ կառուցվածքը՝ նպատակ ունենալով պայքարել խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ: Այդուհանդերձ, CPT-ն շարունակում է անհանգստանալ այն փաստի առթիվ, որ Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա խմբակային հանցագործությունների կատարման կասկածանքով ձերբակալված անձինք դարձյալ չունեն փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունք իրենց ձերբակալման առաջին երկու օրվա ընթացքում. այս առթիվ իր դիրքորոշումը շարադրել է 12-րդ կետում:

Ապա՝ Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց՝ փաստաբան ունենալու իրավունքի իրական եռությունը նվազ բարեփոխված է, քան սովորական հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց մույն իրավունքը: Հատկապես, որքանով որ կարող է CPT-ն գնահատել, խնդիր է մնում այն, որ մնան կասկածյալները չունեն փաստաբան ունենալու իրավունք ոստիկանությունում բացատրություններ տալիս, և որ Փաստաբանների միության կողմից փաստաբան նշանակել թույլատրող ընթացակարգը հասու չէ նրանց համար: Նմանապես, 18 տարին չլրացած անձանց համար փաստաբան նշանակելու պարտականություն սահմանող դրույթը չի գործում այն անչափահասների նկատմամբ, որոնք ձերբակալվել են՝ կասկածվելով Պետական անվտանգության գործերով դատարանի քննությանը ենթակա հանցագործությունների կատարման մեջ: Այս առթիվ, CPT-ն հիշեցնում է 1997 թվականին կատարած այցի ժամանակ կազմված հաշվետվության մեջ արված առաջարկությունն առ այն, որ Քրեական դատավարության օրենսգրքի 135, 136 և 138-րդ հոդվածների համապատասխան դրույթները հասու դառնան Պետական անվտանգության գործերով դատարանի քննությանը ենթակա հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց»:

(b) Միացյալ ազգեր

(i) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

42. 2003 թվականի մայիսի 27-ին Թուրքիայի վերաբերյալ արված իր եզրակացություններում և առաջարկություններում (CAT/C/CR/30/5) Հանձնաժողովը նշել է հետևյալը.

«5. Հանձնաժողովը մտահոգված է.

(c) խախտումներով, համաձայն որոնց՝ ոստիկանությունում անձինք չեն ստանում արագ և համարժեք իրավաբանական և բժշկական օգնություն, և որ ընտանիքի անդամները չեն տեղեկացվում նրանց ձերբակալման մասին.

...

7. Հանձնաժողովն առաջարկում է, որպեսզի անդամ պետությունը.

(a) ապահովի, որպեսզի ձերբակալված անձինք, այդ թվում նաև նրանք, որոնք ձերբակալվել են Պետական անվտանգության գործերով դատարանի քննության ենթակա հանցագործությունների կատարման համար, գործնականում երաշխավորված լինեն վատ վերաբերմունքի և խոշտանգումների չկիրառումից, հատկապես երաշխավորելով նրանց բժշկական և իրավաբանական օգնության և ընտանիքի հետ կապվելու իրավունքը.

...»

43. 2008 թվականի հունվարի 24-ի իր թիվ 2 ընդհանուր մեկնաբանության մեջ Հանձնաժողովը նշել է.

«13. Ազատությունից զրկված բոլոր անձանց նկատմամբ կիրառվող որոշ հիմնական երաշխիքները. դրանցից մի քանիսը նշված են Կոնվենցիայում, և Հանձնաժողովը համապատասխանաբար կոչ է անում անդամ պետություններին հետևել դրանց: Հանձնաժողովի արդյունավետ միջոցներին վերաբերող առաջարկությունները նպատակ ունեն պարզելու գործող չափանիշները. դրանք սպառիչ չեն: Նման երաշխիքները ներառում են, *inter alia*, անհապաղ անկախ իրավաբանական օգնություն ստնալու իրավունքը...»:

(c) Եվրոպական միություն

44. Հիմնարար իրավունքների խարտիայի 48-րդ հոդվածի համաձայն՝ «պետք է երաշխավորված լինի յուրաքանչյուր մեղադրյալի պաշտպանության իրավունքը»: Ապա 52-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ 48-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը նրանց շարքում է, որոնք ունեն միևնույն իմաստը և միևնույն ծավալը՝ որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված համարժեք իրավունք:

Իրավունքի հարցեր

I. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վիճարկվող խախտում

A. Կալանքի ընթացքում փաստաբան ունենալու իրավունքը

45. Դիմողը բողոքել է, որ իր պաշտպանության իրավունքը խախտվել է, քանի որ նա չի ունեցել փաստաբան կալանքի ընթացքում: Նա հղում է կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կետ 3(c)-ին, համաձայն որի.

«3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

...

(c) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը»:

1. Պալատի վճիռը

46. 2007 թվականի ապրիլի 26-ի իր վճռում Պալատը նշել է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կետ 3(с)-ի խախտում: Այդ առթիվ այն նշել է, որ դատաքննության և գործի վերաքննության ընթացքում դիմողը ներկայացվել է պաշտպանի կողմից, և որ ոստիկանությունում դիմողի կողմից տրված բացատրությունը չի եղել նրա դատապարտման միակ հիմքը: Համաձայն Պալատի՝ դիմողը հնարավորություն է ունեցել ժխտելու մեղադրանքի կողմից պնդումներն այնպիսի պայմաններով, որոնք նրան չեն դրել էական անբարենպաստ վիճակի մեջ՝ vis-a-vis իր ընդդիմախոսի հետ: Պալատը նաև նկատել է, որ դիմողին դատապարտելիս Իզմիրի Պետական անվտանգության գործերով դատարանը հաշվի է առել այն հանգամանքները, որոնցում դիմողը ձերբակալվել է, պաստառի վրա առկա ձեռագրի առթիվ փորձագիտական եզրակացությունը և վկաների ցուցմունքները: Հաշվի առնելով վերը նշվածը՝ այն եզրակացնում է, որ դիմողի գործով տեղի ունեցած դատաքննության արդարացիությունը կողմնակալ չի դարձել կալանքի ընթացքում իրավաբանական օգնություն չստանալու պատճառով:

2. Կողմերի ներկայացրած բացատրությունները

(a) Դիմողը

47. Դիմողը վիճարկել է այն հիմքերը, որոնցով Պալատը գտել է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կետ 3(с)-ի խախտում: Նա հայտարարել է, որ կալանքի ընթացքում փաստաբանի օգնությունը եղել է հիմնարար իրավունք: Նա հիշեցրել է Դատարանին, որ իր դեմ եղած բոլոր ապացույցները հավաքվել են նախնական քննության փուլում, որի ընթացքում իրեն չեն տրամադրել փաստաբան: Այս առթիվ դիմողը նաև վիճարկել է, որ չնայած դատարանը դատապարտել է իրեն, առկա չի եղել իր մեղավորությունը հիմնավորող որևէ ապացույց: Նա նաև հայտարարել է, որ կալանքի ընթացքում նա ենթարկվել է վատ վերաբերմունքի և ոստիկանությունում տրված ցուցմունքը ստորագրել է ճնշման ներքո: Այդ ցուցմունքն օգտագործվել է Իզմիրի Պետական անվտանգության գործերով դատարանում, չնայած որ դատախազի, գործը քննող դատավորի մոտ և դատաքննության ընթացքում ինքը լիովին հրաժարվել է այդ ցուցմունքից: Դիմողը նաև նշել է, որ տվյալ ժամանակահատվածում ինքը եղել է անչափահաս և նախկինում դատված չի եղել: Նրա պնդմամբ, հաշվի առնելով իր դեմ առկա լուրջ մեղադրանքները, իրավաբանական օգնության բացակայությունը խախտել է արդար դատաքննության իր իրավունքը: Նա նաև առարկել է, որ Կառավարությունը չի ներկայացրել որևէ հիմնավորում իրավաբանական օգնության բացակայությունն արդարացնելու առնչությամբ:

(b) Կառավարությունը

48. Կառավարությունը խնդրել է Մեծ պալատին հաստատել Պալատի այն եզրակացությունը, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(с) կետի խախտում: Այն հայտարարել են, նախևառաջ, որ օրենսդրությունը փոխվել է 2005 թվականին: Ապա նշել է, որ փաստաբան ունենալու դիմողի իրավունքի սահմա-

նափակումը չի խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության նրա իրավունքը: Չդուր կատարելով Դատարանի պրակտիկային (մասնավորապես, Իմբրիոսցիան ընդդեմ Շվեյցարիայի գործով 1993 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, մաս A, թիվ 275, Ջոն Մյուրեյի ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1996 թվականի փետրվարի 8-ի վճիռը, Վճիռների և որոշումների Դավաբաժնի 1996-Ի, Ավերիլը ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, թիվ 36408/97, ECHR 2000-VI Մագին ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, թիվ 28135/95, ECHR 2000-VI և Բրենանը ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, թիվ 39846/98, ECHR 2001-X)՝ նշել է, որ դատաքննությունն արդար լինելու հարցը որոշելիս ուշադրություն պետք է դարձնել քննության ողջ ծավալին: Այսպես, քանի որ դիմողը ներկայացվել է փաստաբանի կողմից Իզմիրի Պետական անվտանգության գործերով դատարանում և Վճռաբեկ դատարանում, արդար դատաքննության նրա իրավունքը խախտված չի եղել: Ապա Կառավարությունն ուշադրություն է հրավիրել ընդդեմ Թուրքիայի գործերի վրա (Սարաքն ընդդեմ Թուրքիայի (dec.) գործով 2004 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, թիվ 35841/97, Յուրթեսեվերն ընդդեմ Թուրքիայի գործով 2006 թվականի օգոստոսի 31-ի վճիռը, թիվ 42086/02 Ուքման և Ուքման ընդդեմ Թուրքիայի (dec.) գործով 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, Ահմետն Յավուզն ընդդեմ Թուրքիայի (dec.) գործով 2006 թվականի նոյեմբերի 21-ի վճիռը, թիվ 38827/02 և Յիլդիզն ու Սոնմեզն ընդդեմ Թուրքիայի գործով (dec.) 2006 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռները, թիվ 3543/03 և 3557/03), որտեղ Դատարանը նման գանգատներն անընդունելի է համարել անհիմն լինելու պատճառով, քանի որ ոստիկանությունում արված հայտարարությունները չեն եղել դատապարտմանը նպաստող միակ ապացույցը, կալանքի ընթացքում իրավաբանական օգնության բացակայությունը չի հանգեցրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման:

49. Անդրադառնալով տվյալ գործի փաստերին՝ Կառավարությունը նշել է, որ երբ դիմողը ձերբակալվել է, նա ունեցել է ցուցմունք չտալու իրավունք, և որ հետագա քննության ընթացքում նրա փաստաբանն ունեցել է հնարավորություն վիճարկելու դատախազի պնդումները: Ապա այն ընդգծել է, որ ոստիկանությունում դիմողի կողմից տրված ցուցմունքը չի եղել նրա դատապարտման միակ հիմքը:

3. Դատարանի գնահատականը

(a) Տվյալ գործով կիրառելի հիմնական սկզբունքները

50. Դատարանը կրկնում է, որ եթե նույնիսկ քրեական գործով քննության առիթով 6-րդ հոդվածի հիմնական նպատակն է ապահովել արդար դատական քննություն «դատարանի» կողմից, որն իրավասու է հաստատել «որևէ քրեական մեղադրանք», դրանից չի հետևում, որ հոդվածը կիրառելի չէ նախնական քննության նկատմամբ: Այդպիսով, 6-րդ հոդվածը, մասնավորապես՝ 3-րդ կետը, կարող է նույն կերպ կիրառվել մինչև գործը դատարան ուղարկելը, եթե դատական քննության արդար լինելու համոզեց կողմնակալ մոտեցում է դրադրվել դրա դրույթներին դիտավորյալ չհետևելու արդյունքում (վերը նշված Իմբրիոսցիայի գործը, կետ 36): Ինչպես Դատարանն արդեն նշել է իր նախկին վճիռներում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(գ) կետում նշված իրավունքն այլոց շարքում հանդիսանում է 1-ին կետում պարունակվող՝ քրեական գործերով արդար դատաքննության հայե-

ցակարգի կոնցեպցիայի տարրերից մեկը (վերը նշված Իմբրիոսցիայի գործը, կետ 37 և վերը նշված Բրենանի գործը, կետ 45):

51. Դատարանը նաև կրկնում է, որ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի՝ անհրաժեշտության դեպքում պաշտոնապես նշանակված դատապաշտպանի միջոցով արդյունավետորեն պաշտպանվելու իրավունքը, չնայած ոչ բացարձակ կերպով, արդար դատաքննության հիմնարար տարրերից մեկն է (Պոլիտիմոլն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1993 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, մաս A, թիվ 277-A և Դեմեբուկովն ընդդեմ Բուլղարիայի գործով 2008 թվականի փետրվարի 28-ի վճիռը, թիվ 68020/01, կետ 50): Այդուհանդերձ, 6-րդ հոդվածի 3(c) կետը չի նախատեսում այս իրավունքի կիրառման ձևը: Այդպիսով՝ պայմանավորվող պետություններն իրենք են որոշում իրենց դատական համակարգում դրա կիրառման ձևերը, Դատարանի խնդիրն է միայն որոշել՝ արդյոք նրանց ընտրած մեթոդը համապատասխանում է արդար դատաքննության պահանջներին, թե՛ ոչ: Այդ կապակցությամբ պետք է հիշել, որ Կոնվենցիան նախատեսված է «երաշխավորել ոչ թե տեսական կամ պատրանքային, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ», և որ դատապաշտպան նշանակելն ինքնին չի ապահովում այն օգնության արդյունավետությունը, որն այն կարող է տրամադրել կասկածյալին (վերը նշված Իմբրիոսցիայի գործը, կետ 38):

52. Ներպետական օրենքները կարող են հետևանքներ նախատեսել նախնական քննության փուլում ոստիկանությունում ցուցմունք տալիս կասկածյալի դիրքորոշման համար, որոնք վճռորոշ են պաշտպանության հեռանկարների համար ցանկացած քրեական գործի քննության ժամանակ: Նման հանգամանքներում 6-րդ հոդվածը սովորաբար պահանջում է, որպեսզի կասկածյալը փաստաբան ունենա արդեն իսկ նախնական քննության փուլում ոստիկանությունում հարցաքննվելիս: Այդուհանդերձ, այս իրավունքը դեռ կարող է լինել սահմանափակումների առարկա բավարար հիմքերի առկայության դեպքում: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր գործով հարց է, թե արդյոք սահմանափակումը եղել է արդարացված, թե՛ ոչ, և եթե՛ այո, ապա՝ արդյոք ողջ քննության լույսի ներքո այն չի զրկել կասկածյալին արդար դատաքննության իրավունքից, քանի որ նույնիսկ արդարացված սահմանափակումը որոշակի հանգամանքներում կարող է դրան հանգեցնել (տես Ջոն Մյուրեյի վերը նշված գործը, կետ 63, Բրենանի վերը նշված գործը, կետ 45 և Մագիի վերը նշված գործը, կետ 44):

53. Վերը՝ 52-րդ կետում ընդգծված այս սկզբունքները նույնպես կապված են մարդու իրավունքների ընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափանիշների հետ (տես վերը՝ 37-42), որոնք արդար դատական քննության կոնցեպցիայի կորիզն են, և որոնց հիմնավորումը մասնավորապես կապված է կասկածյալին իշխանությունների կողմից դաժան վերաբերմունքից պաշտպանելու հետ: Դրան նպաստում են նաև պաշտպանությանը դատական սխալից և 6-րդ հոդվածի նպատակների իրականացմանը, հատկապես՝ կողմերի հավասարությանը մեղադրող իշխանությունների և կասկածյալների միջև:

54. Այդ կապակցությամբ Դատարանն ընդգծում է քրեական գործի քննության նախապատրաստման համար նախաքննության կարևորությունը, քանի որ այս փուլում ձեռք բերված ապացույցները որոշում են այն շրջանակները, որոնցում համապատասխան մեղադրանքը կքննվի դատարանում (Կանն ընդդեմ Գլստրիայի, թիվ 9300/81, Հանձնաժողովի՝ 1984 թվականի հուլիսի 12-ի հաշվետ-

վությունը, մաս A, թիվ 96): Միևնույն ժամանակ, կասկածյալը հայտնվում է հատկապես խոցելի իրավիճակում քննության հենց այդ փուլում, որի ազդեցությունն ուժեղանում է այն փաստով, որ քրեական դատավարական օրենսդրությունը կարող է դառնալ ավելի ու ավելի բարդ՝ հատկապես հաշվի առնելով ապացույցներ ձեռք բերելու կանոնները: Շատ դեպքերում այս հատուկ խոցելիությունը կարող է միայն պատշաճ կերպով փոխհատուցվել փաստաբանի օգնությամբ, որի աշխատանքն այլոց շրջանակներում անմեղ համարվելու՝ կասկածյալի իրավունքի ապահովումն է: Իրոք, այս իրավունքը ենթադրում է, որ քրեական գործի քննության ժամանակ մեղադրանքի կողմը փորձում է ապացուցել իր դիրքորոշումը կասկածյալի նկատմամբ՝ առանց այնպիսի ապացույցների, որոնք ձեռք են բերվել կասկածյալի նկատմամբ հարկադրանքի կամ նրա կամքին բռնանալու միջոցով (տես Ջալոհն ընդդեմ Գերմանիայի [GC], թիվ 54810/00, կետ 100, ECHR 2006-..., և Քոլուն ընդդեմ Թուրքիայի գործով 2005 թվականի օգոստոսի 2-ի վճիռը, թիվ 35811/97, կետ 51): Վաղ փուլում փաստաբան ունենալը դատավարական երաշխիքների մասն է, որոնց Դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում այն հարցը լուծելիս, թե արդյոք, դատավարությունը բացառել է անմեղ համարվելու իրավունքի ռիսկերը, թե՛ ոչ (տես, mutatis mutandis, Ջալոհի վերը նշված գործը, կետ 101): Այդ կապակցությամբ Դատարանը նշում է նաև CPT-ի առաջարկությունները (վերը՝ կետեր 39-40), որոնցում Հանձնաժողովը հաճախ հայտարարել է, որ կալանավորվածի՝ փաստաբան ունենալու իրավունքը հիմնարար երաշխիք է վատ վերաբերմունքի դեմ: Այս իրավունքի իրականացումից ցանկացած բացառություն պետք է, անշուշտ լինի սահմանափակ, և դրա կիրառումը պետք է լինի խիստ կարճ ժամկետով: Այս սկզբունքները նախատեսված են հատկապես ծանր հանցագործությունների համար, քանի որ խիստ պատիժների դեպքում է, որ արդար դատաքննության իրավունքը պետք է ապահովվի հնարավորինս բարձր մակարդակով՝ ժողովրդավարական հասարակությունների կողմից:

55. Այս պահանջի առիթով Դատարանը գտնում է, որպեսզի արդար դատական քննության իրավունքը լինի բավականաչափ «պրակտիկ և արդյունավետ» (տես վերը՝ կետ 51), 6-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է, որպես կանոն, փաստաբան ունենալու իրավունքը նախատեսվի ոստիկանության կողմից կասկածյալի առաջին հարցաքննությունից, բացառությամբ, եթե յուրաքանչյուր գործի յուրահատուկ հանգամանքների լույսի ներքո ներկայացված է, որ առկա են այդ իրավունքի սահմանափակման հարկադրող պատճառներ: Երբ նույնիսկ հարկադրող պատճառները կարող են բացառապես արդարացնել փաստաբան ունենալու իրավունքի մերժումը, այդուհանդերձ, այդ սահմանափակումը չպետք է անհարկի խախտի կասկածյալի՝ 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքները (տես, mutatis mutandis, Մագիի վերը նշված գործը, կետ 44): Պաշտպանության այս իրավունքները, ըստ էության, անդառնալիորեն կվնասվեն, երբ ոստիկանությունում առանց փաստաբանի ներկայության հարցաքննության ընթացքում տրված ինքնախոստովանական ցուցմունքները դրվեն դատապարտման հիմքում:

(b) Վերը նշված սկզբունքների կիրառումը տվյալ գործով

56. Տվյալ գործով դիմողի՝ փաստաբան ունենալու իրավունքը սահմանափակվել է կալանքի ընթացքում՝ համաձայն թիվ 3842 օրենքի 31-րդ մասի, քանի որ նա կասկածվել է Պետական անվտանգության գործերով դատարանին ենթա-

կա հանցագործության կատարման մեջ: Արդյունքում՝ նրան չի տրամադրվել փաստաբան, երբ նա ցուցմունք է տվել ոստիկանությունում, դատախազին և գործը քննող դատավորին: Այդպիսով, չի եղել փաստաբան չտրամադրելու որևէ այլ արդարացում, բացի այն փաստից, որ տվյալ դեպքում փաստաբան չտրամադրելը հիմնված է եղել համապատասխան իրավական դրույթների վրա: Որպես այդպիսին՝ այդ արդեն իսկ չի համապատասխանում 6-րդ հոդվածի պահանջներին, որոնք շարադրված են վերը՝ 52-րդ կետում:

57. Դատարանը նաև նկատում է, որ դիմողն ունեցել է փաստաբան իր կալանքից հետո: Քրեական գործով քննությունն իրականացնելիս նա նաև հնարավորություն է ունեցել կանչելու իր վկաներին և վիճարկելու դատախազի փաստարկները: Հայտնի է նաև, որ դիմողը բազմիցս ժխտել է ոստիկանությունում տրված իր ցուցմունքի բովանդակությունն ինչպես դատարանում, այնպես էլ գործի վերաքննության ժամանակ: Այդուհանդերձ, ինչպես երևում է գործի նյութերից, քննությունը մեծամասամբ ավարտված է եղել մինչև 2001 թվականի հունիսի 1-ը, այսինքն՝ մինչև դիմողին գործը քննող դատավորի մոտ բերելը: Դեռ ավելին, Իգմիրի Պետական անվտանգության գործերով դատարանը ոչ միայն չի քննել կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողի ցուցմունքների ընդունելիության հարցը մինչև գործի քննությանն անցնելը, այլ նաև օգտագործել է ոստիկանությունում տրված ցուցմունքները որպես դիմողին դատապարտելու հիմնական ապացույցներ, չնայած որ նա ժխտել է դրանց ճշմարտացիությունը (տես վերը՝ կետ 23): Այս կապակցությամբ Դատարանը գտնում է, որ դիմողին դատապարտելիս Իգմիրի Պետական անվտանգության գործերով դատարանը փաստորեն օգտագործել է իրեն ներկայացված ապացույցը՝ ի հաստատումն ոստիկանությունում դիմողի կողմից տրված ցուցմունքների: Այս ապացույցը ներառել է փորձագետի՝ 2001 թվականի հունիսի 1-ի եզրակացությունը, ինչպես նաև ոստիկանությունում և դատախազին այլ կասկածյալների կողմից տրված ցուցմունքները: Այս առթիվ, այդուհանդերձ, Դատարանը տարօրինակ է համարում այն, որ առաջին ատյանի դատարանի դատավճռում նշված փորձագիտական եզրակացությունը եղել է դիմողի օգտին, քանի որ դրանում նշվել է, որ հնարավոր չէ հաստատել, թե արդյոք պաստառի վրա առկա ձեռագիրը պատկանում է դիմողին, թե՛ ոչ (տես՝ վերը՝ կետ 15): Հատկանշական է նաև այն, որ բաղդր մյուս մեղադրյալները, ովքեր ոստիկանությունում և դատախազի կողմից բարցաքննվելիս ցուցմունք են տվել դիմողի դեմ՝ դատարանում ժխտել են իրենց ցուցմունքները, ինչպես նաև հերքել են, որ մասնակցել են ցույցին:

58. Այդպիսով, տվյալ գործով դիմողը, անկասկած, ենթարկվել է փաստաբան ունենալու իրավունքի սահմանափակումների, քանի որ ոստիկանությունում տրված նրա ցուցմունքները դրվել են նրա դատապարտման հիմքում: Ոչ հետագայում փաստաբանի կողմից տրամադրված օգնությունը, ոչ էլ հետագա քննության մրցակցային բնույթը չեն կարողացել շտկել կալանքի ընթացքում թույլ տրված թերությունները: Այդուհանդերձ, Դատարանի խնդիրը չէ որոշել, թե կալանքի տակ գտնվելու ընթացքում դիմողի՝ փաստաբան ունենալու իրավունքն ինչ ազդեցություն կունենար հետագա քննության վրա:

59. Ապա Դատարանն անդրադառնում է նրան, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ոչ տառը, ոչ էլ բուն էությունը չեն արգելում անձին իր իսկ կամքով հատակորեն կամ լռությամբ հրաժարվել արդար դատական քննության երաշխիքներից օգտ-

վելու իրավունքից (տե՛ս Կվիստկովսկան ընդդեմ Իտալիայի գործով (dec.) 2000 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, թիվ 52868/99): Այդուհանդերձ, եթե արդյունավետ է Կոնվենցիայի նպատակների համար, նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը պետք է հաստատվի որոշակիորեն և ապահովվի նվազագույն երաշխիքներով՝ որա կարևորությամբ համապատասխան (տե՛ս Սեյդուվիկն ընդդեմ Իտալիայի [GC], թիվ 56581/00, կետ 86, ECHR 2006-..., Կոլուի վերը նշված գործը, կետ 53 և Կոլոցան ընդդեմ Իտալիայի գործով 1985 թվականի փետրվարի 12-ի վճիռը, կետ 28, մաս A, թիվ 89): Այդպիսով, տվյալ գործով վստահություն չկա դիմողի իրավունքների մասին ձևաթղթի հաստատման նկատմամբ այն առումով, որ նրան հիշեցվել է լռելու իրավունքի մասին (տե՛ս վերը՝ կետ 14):

60. Վերջապես, Դատարանը նկատում է, որ տվյալ գործի յուրահատուկ տարրերից է դիմողի տարիքը: Չաշվի առնելով կալանքի տակ գտնվելու ընթացքում անչափահասների՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի առնչությամբ համապատասխան միջազգային նյութերի զգալի թիվը (տե՛ս վերը՝ կետեր 32-36)՝ Դատարանն ընդգծում է իրավաբանական օգնություն տրամադրելու հիմնարար նշանակությունը, երբ կալանքի տակ գտնվող անձն անչափահաս է:

61. Այնուամենայնիվ, տվյալ գործով, ինչպես արդեն պարզաբանվել է վերը, փաստաբան ունենալու իրավունքի սահմանափակումը եղել է պարբերաբար և կիրառվել է կալանքի տակ գտնվող ցանկացած անձի նկատմամբ՝ կապված Պետական անվտանգության գործերով դատարանին ենթակա հանցագործության հետ, հաշվի չառնելով տվյալ անձի տարիքը:

62. Արդյունքում՝ չնայած դիմողը հնարավորություն է ունեցել իր դեմ առկա ապացույցները վիճարկելու դատարանում և ապա՝ գործի վերաքննության ընթացքում, կալանքի տակ գտնվելու ընթացքում փաստաբանի բացակայությունն անշտկելի ազդեցություն է ունեցել նրա պաշտպանության իրավունքի վրա:

(c) Եզրակացություն

63. Չաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը եզրակացնում է, որ տվյալ գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(c) կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ մեկտեղ:

B. Վճռաբեկ դատարանում Գլխավոր դատախազի գրավոր կարծիքի չվերաբերելը

64. Դիմողը բողոքել է, որ Վճռաբեկ դատարանում Գլխավոր դատախազի գրավոր կարծիքը չի վերաբերել իրեն: Այս առթիվ նա հղում է կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, որի համապատասխան մասի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ...դատարանի կողմից արդարացի ... դատաքննության իրավունք»:

1. Պալատի վճիռը

65. 2007 թվականի ապրիլի 26-ի իր վճռում Պալատը գտել է, որ հարցի առնչությամբ ընդունված պրակտիկայի լույսի ներքո Վճռաբեկ դատարանում

Գլխավոր դատախազի գրավոր կարծիքը դիմողին չվերաբերելը խախտել է նրա՝ մրցակցության իրավունքը: Այդ իսկ պատճառով այն եզրակացրել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառելիությունը

68. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Վնասը

1. Կողմերի փաստարկները

69. Դիմողը պահանջել է 5,000 եվրո (EUR) նյութական վնասի համար և 10,000 եվրո՝ ոչ նյութական վնասի համար:

70. Կառավարությունն առարկել է՝ գտնելով, որ պահանջվող այդ գումարները չափազանց մեծ են և անընդունելի:

2. Պալատի վճիռը

71. Պալատը դիմողին չի տրամադրել որևէ նյութական հատուցում՝ նշելով, որ վերջինս չի հիմնավորել իր պահանջները: Պալատը գտել է, որ խախտման հաստատումն ինքնին դիմողի կողմից կրած ոչ նյութական վնասի արդարացի բավարարում է:

3. Դատարանի գնահատականը

72. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման համար փոխհատուցման առավել պատշաճ ձևն է ապահովել, որպեսզի դիմողը հնարավորինս դրվի այնպիսի դրության մեջ, որում տվյալ դրույթը չէր անտեսվի (տե՛ս - Տետերինն ընդդեմ Ռուսաստանի գործով 2005 թվականի հունիսի 30-ի վճիռը, թիվ 11931/03, կետ 56, Ջելիչիկն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, թիվ 41183/02, կետ 53, ECHR 2006-... և Սեհմետն ու Սունան Յիգիտն ընդդեմ Թուրքիայի գործով 2007 թվականի հուլիսի 17-ի վճիռը, թիվ 52658/99, կետ 47): Դատարանը գտնում է, որ այս սկզբունքը կիրառելի է նաև տվյալ գործով: Յետևաբար, գտնում է, որ փոխհատուցման առավել պատշաճ ձևը կլինի դիմողի գործի վերանայումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան, եթե այդպիսի խնդրանքով հանդես գա դիմողը (տե՛ս mutatis mutandis, Ջենսելն ընդդեմ Թուրքիայի գործով 2003 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռը, կետ 27):

73. Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի մնացած մասին՝ Դատարանն օբյեկտիվ է համարում դիմողին տրամադրել 2,000 եվրո:

B. Ծախքեր և ծախսեր

1. Կողմերի փաստարկները

74. Դիմողը պահանջել է 3,500 եվրո ներպետական ատյաններում, ինչպես նաև Պալատում իրականացված քննությունների արդյունքում կրած ծախքերի և ծախսերի համար, առանց ներկայացնելու որևէ փաստաթուղթ՝ ի հաստատումն իր պահանջների: Պետք է նկատել, որ դիմողը չի շտկել Պալատին ուղղված իր սկզբնական պահանջը, սակայն ներկայացրել է իրավաբանական օգնության միջնորդություն Մեծ պալատում առաջացած ծախսերի համար:

75. Կառավարությունն առարկել է պահանջի դեմ վիճարկելով դրա հիմնավորվածությունը:

2. Պալատի վճիռը

76. Պալատը դիմողի համար սահմանել է 1,000 եվրո ծախքերի և ծախսերի համար:

3. Դատարանի գնահատականը

77. Դատարանը նկատում է, որ դիմողն ունեցել է իրավաբանական օգնության իրավունք Մեծ պալատում իրականացվող քննությունների ընթացքում կրած ծախքերի և ծախսերի համար: Արդյունքում՝ ծախքերը և ծախսերը ներառում են ազգային դատարաններում և Պալատում իրականացված քննությունների ընթացքում կրածները:

78. Դատարանի ընդունված պրակտիկային համապատասխան՝ ծախքերն ու ծախսերը չեն փոխհատուցվի 41-րդ հոդվածի ներքո, եթե չի հաստատվել, որ դրանք փաստացի և անհրաժեշտաբար են կատարվել, ինչպես նաև ողջամիտ չափերի են: Դեռ ավելին, իրավաբանական ծախսերը հատուցելի են, եթե դրանք վերաբերում են հաստատված խախտմանը (այլոց շարքում տես՝ Բեվելերն ընդդեմ Իտալիայի (արդարացի փոխհատուցում) [GC], թիվ 33202/96, կետ 27, 2002 թվականի մայիսի 28 և Սահինն ընդդեմ Գերմանիայի [GC], թիվ 30943/96, կետ 105, ECHR 2003-VIII):

79. Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը դիմողին տրամադրում է Պալատի կողմից արդեն իսկ սահմանված գումարը, այն է՝ 1,000 եվրո:

C. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում

80. Դատարանը նպատակահարմար է գտնում որպեսզի փոխհատուցումը չվճարելու դեպքում տուգանային տոկոսները պետք է գանձվեն Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանած տոկոսադրույքի հիման վրա, հավելած երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Միաձայն վճռում է, որ 6-րդ հոդվածի 3(c) կետի առնչությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ կապված դիմողին կալանքի տակ գտնվելու ընթացքում իրավաբանական օգնություն չտրամադրելու հետ,

Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել Կոմվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ կապված Գլխավոր դատախազի՝ Վճռաբեկ դատարանին ներկայացրած գրավոր կարծիքի չվերաբերելու հետ,

Միաձայն վճռում է, որ

պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է վճարի դիմողին ստորև նշված գումարները՝ փոխարկված թուրքական լիրայի՝ վճարման օրվա դրությամբ փոխարժեքին համապատասխան,

- (i) 2,000 եվրո (երկու հազար եվրո), ներառյալ վճարման ենթակա ցանկացած հարկ ոչ նյութական վնասի համար,
- (ii) 1,000 եվրո (մեկ հազար եվրո), ներառյալ դիմողի կողմից վճարման ենթակա ցանկացած հարկ՝ ծախսերի և ծախսերի համար,

Վերոհիշյալ եռամսյա ժամկետը լրանալու պահից մինչև վճարումը պետք է վճարվի սովորական տոկոս՝ պարտականությունը չկատարելու ընթացքում եվրոպական կենտրոնական բանկի սահմանած տոկոսադրույքի հիման վրա՝ հավելած երեք տոկոս,

Միաձայն մերժում է դիմողի՝ արդարացի բավարարման վերաբերյալ պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակվել է դմբաց Գիստում՝ Սարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում 2008 թվականի նոյեմբերի 27-ին:

ԴԱՏԱՎՈՐ ԲՐԱՏՁԱՅԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Տվյալ գործով առանցքային խնդիրն առնչվում է ոստիկանությունում հարցաքննության ընթացքում դիմողի կողմից արված խոստովանությունը նրա դեմ որպես ապացույց կիրառելուն այն ժամանակ, երբ նրան չի տրամադրվել փաստաբան: Մեծ պալատը գտել է, որ տվյալ իրավունքի սահմանափակումն անդառնալիորեն խախտել է դիմողի պաշտպանության իրավունքը, և որ հետագայում դիմողին տրամադրված իրավաբանական օգնությունը, ոչ էլ հետագա քննության մրցակցային բնույթը չեն կարողացել շտկել այն թերությունները, որոնք առաջացել են դիմողի՝ կալանքի տակ գտնվելու ընթացքում: 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ կապված 6-րդ հոդվածի 3(c) կետի ներքո դիմողի իրավունքները համապատասխանորեն խախտվել են՝ կապված իրավաբանական օգնություն չտրամադրելու հետ: Ես լիովին համամիտ եմ այս հետևությանը:

Վճռի 55-րդ կետում Դատարանը, որպես ընդհանուր սկզբունք, նշում է, որ որպեսզի արդար դատաքննության իրավունքը մնա բավարար չափով «պրակտիկ և արդյունավետ», 6-րդ հոդվածը պահանջում է, որ, որպես կանոն, փաստաբան ունենալու իրավունքն ապահովվի «ոստիկանությունում կասկածյալի առաջին հարցաքննությունից»: Այս սկզբունքը համապատասխանում է Դատարանի առավել վաղ պրակտիկային և լիովին բավարար է, որպեսզի Դատարանը հանգի հետևության, որ տվյալ գործի առումով տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում: Այդուհանդերձ, ես կիսում եմ դատավոր Ջագրեբելսկու կասկածներն առ այն, թե արդյոք «փաստաբան ունենալու իրավունքը միայն առաջանում է առաջին հարցաքննության պահից», սկզբունքի ձևակերպումը բավականին հեռու է գնում: Ինչպես և դատավոր Ջագրեբելսկին, ես գտնում եմ, որ Դատարանը պետք է օգտագործեր հնարավորությունը հստակ կերպով հայտարարելու, որ 6-րդ հոդվածի ներքո քրեական գործի քննության արդարացիությունը պահանջում է, որ, որպես

կանոն, կասկածյալին տրամադրվի իրավաբանական խորհրդատվություն այն պահից, երբ նա ձերբակալվում է ոստիկանությունում կամ գտնվում է նախնական կալանքի տակ: Ցավալի կլիմի, եթե վճռից ստեղծվի այնպիսի տպավորություն, որ 6-րդ հոդվածի ներքո չէր կարող առաջանալ որևէ խնդիր, քանի որ կասկածյալի՝ փաստաբան ունենալու իրավունքն ապահովվել է հարցաքննության պահից, կամ որ 6-րդ հոդվածին անդրադարձ է եղել միայն այն ժամանակ, երբ փաստաբան ունենալու իրավունքն ազդել է կասկածյալի հարցաքննության արդարացիության վրա: Կասկածյալի կալանքի սկզբից փաստաբան ունենալու իրավունքի մերժումը, որը սովորաբար վնասում է պաշտպանության իրավունքը, կարող է խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ անկախ այն հանգամանքից, թե խախտումն առաջացել է կասկածյալի հարցաքննությունից, թե՛ ոչ:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՌՈՋԱՎԻՍԻ, ՍՊԻԼՄԱՆԻ, ԶԻԵՄԵԼԻ ԵՎ ԼԱՋԱՐՈՎԱ-ՏՐԱՅՎՈՎՍԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՅԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Բոլոր տեսակետներով մենք համամիտ ենք Դատարանի կարծիքին առ այն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ կապված 6-րդ հոդվածի 3(c) կետի խախտում

2. Այդուհանդերձ, մենք կցանկանաինք, որպեսզի վճռի 72-րդ կետում նշված պատճառաբանությունը, կապված դրա կարևորության հետ, նույնպես ներառվի օպերատիվ դրույթների մեջ այն պատճառաբանությամբ, որն արդեն որոշ չափով պարզաբանվել է դատավոր Սպիելմանի և դատավոր Մալինվերնիի միացյալ համընկնող կարծիքում՝ Վլադիմիր Ռոմանովն ընդդեմ Ռուսաստանի գործով (թիվ 41461/02, 2008 թվականի հուլիսի 24-ի վճիռը), ինչպես նաև դատավոր Պիելմանի համընկնող կարծիքում՝ Պալուֆակինը և Զերնիշևն ընդդեմ Ռուսաստանի գործով (թիվ 30997/02, 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը), ինչն այժմ կրկնվում են այստեղ:

3. Նախևառաջ, հանրահայտ փաստ է, որ Դատարանի վերջնական վճռի պատճառաբանություն է թույլ տալիս Պայմանավորվող պետություններին զնահատել այն հիմքերը, որոնցով Դատարանը հանգել է Կոնվենցիայի խախտման կամ չխախտման եզրակացությանը, և մեծ կարևորություն ունի՝ կապված Կոնվենցիայի մեկնաբանման հետ, եզրափակիչ դրույթներն են պարտավորեցնում կողմերին՝ համաձայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի մասի:

4. Եվ, իրոք, այն, ինչ Դատարանն ասում է վճռի 72-րդ կետում, մեր կարծիքով ունի մեծ կարևորություն: Այն հիշեցնում է, որ երբ ամբը դատապարտվում է 6-րդ հոդվածով մախատեսված դատավարական երաշխիքների խախտմամբ, նա հնարավորինս պետք է դրվի այնպիսի դրությամբ մեջ, որում այդ հոդվածի պահանջները չէին անտեսվի (restitution in integrum սկզբունքը):

5. Restitution in integrum սկզբունքն առաջին անգամ ի հայտ է եկել Չորզովի գործարանի հետ կապված գործով (գումարի վճարման պահանջ) (հանգամանքները) Սիջազգային արդարադատության մշտական դատարանի՝ 1928 թվականի սեպտեմբերի 13-ի վճռում, որում Դատարանը նշել է հետևյալը.

«Գլխավոր սկզբունքն այն է, ... որ փոխհատուցումը պետք է վերացնի ապօրինի գործողության բոլոր հետևանքները և վերահաստատի այն դրությունը, որը հա-

վանաբար առկա կլինեն, եթե այդ գործողությունը կատարված չլիներ» (Մաս A, թիվ 17, էջ 47):

6. Այս սկզբունքը, այն է՝ *restitution in integrum*, որը համարվում է միջազգային իրավունքի խախտումների դիմաց փոխհատուցում տրամադրելու համար առաջնային միջոց, մշտապես պատասխանատվել է միջազգային նախադեպով և պրակտիկայով և վկայակոչված է կատասխանող պետության առնչությանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախագծի 35-րդ հոդվածում:

ՅՈՒՆԿՕ-ի նախագծի 35-րդ հոդվածի համաձայն

«Միջազգայնորեն սխալ գործողության համար պատասխանատու պետությունը պարտավոր է ապահովել ռեստիտուցիա, այն է՝ վերահաստատել այն դրությունը, որն առկա է եղել մինչև սխալ գործողության կատարումը, եթե այդ ռեստիտուցիան՝

(a) նյութական առումով անհնարին չէ,

(b) չի ներառում չափազանց մեծ բեռ, որի արդյունքում փոխհատուցման փոխարեն օգուտ է առաջանում ռեստիտուցիայից»:

Չկա որևէ պատճառ չկիրառելու այս սկզբունքը մարդու իրավունքների ոլորտում միջազգայնորեն սխալ գործողության համար փոխհատուցում ապահովելու նպատակով, (տե՛ս Լուկիս Գ. Լուկախիդես «Եվրոպական կոնվենցիայի ներքո մարդու իրավունքների խախտումների դիմաց փոխհատուցումները և *Restitutio in integrum*», [2008] Մարդու իրավունքների առնչությամբ եվրոպական դատական պրակտիկայի դիտարկում, էջեր 182-192):

Պապամիխալոպուլոսը և այլոք ընդդեմ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ գործով ((50-րդ հոդված), 1995 թվականի հոկտեմբերի 31, Մաս A, թիվ 330-B) Դատարանը նշել է հետևյալը.

«34. Դատարանը մատնանշում է, որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն Բարձր պայմանավորվող կողմերը պատրաստվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործով, որում նրանք կողմ են, դեռ ավելին՝ 46-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ Դատարանի վերջնական վճիռը պետք է ուղարկվի Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ: Յետևաբար, վճիռը, որով Դատարանը հայտնաբերում է խախտում, Պետության վրա օրինական պարտականություն է դնում դադարեցնել խախտումը և փոխհատուցում տրամադրել դրա հետևանքների համար՝ այնպիսի միջոցով, ինչպիսին է մինչև խախտումն առկա դրության հնարավորինս վերականգնումը»:

Պայմանավորվող Պետությունները, որոնք հանդես են գալիս գործի կողմեր, ըստ էության, ազատ են միջոցների ընտրության հարցում, որոնցով նրանք կատարելու են վճիռը, որով Դատարանը գտել է համապատասխան խախտումը: Վճռի կատարման ձևի ընտրության այս ազատությունն արտացոլում է ընտրության ազատությունը, որը նախատեսվում է, Պայմանավորվող պետությունների առաջնային պարտականության հետ մեկտեղ. Կոնվենցիայով, համաձայն որի՝ նրանք պետք է ապահովեն երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացումը (հոդված 1): Եթե խախտման բնույթը թույլ է տալիս *restitution in integrum*, պատասխանատու պետությունը պարտավոր է այն իրականացնել, քանզի Դատարանը չունի ոչ իշխանություն, ոչ էլ գործնական հնարավորություն մաս կերպ վարվելու համար: Մյուս կողմից, եթե ներպետական իրավունքը լիովին կամ մասնակիորեն թույլ է տալիս տրամադրել վնասների փոխհատուցում,

41-րդ հոդվածը թույլ է տալիս Դատարանին տուժած կողմին տրամադրել այնպիսի բավարարում, որը նա պատշաճ է համարում»:

7. Տվյալ գործով, որով դիմողի կալանքի տակ գտնվելու ընթացքում փաստաբանի բացակայությունն անդառնալիորեն ազդել է նրա պաշտպանության իրավունքի վրա (տես՝ վճռի կետ 62), դրան հասնելու լավագույն միջոցն է քննության վերսկսումը և նոր դատաքննություն սկսելը, որով կապահովվեն արդար դատաքննության բոլոր երաշխիքները, իհարկե, պայմանով, որ դիմողը միջնորդում է նման գործողության կատարման համար, և դա հնարավոր է պատասխանատու պետության ազգային օրենսդրությամբ:

8. Պատճառը, թե ինչու ենք կամենում ընդգծել այս պահը, այն է, որ չպետք է անտեսվի այն համագամանքը, որ վնասները, որոնք Դատարանի որոշմամբ պետք է հատուցվեն Կոնվենցիայի զոհերին՝ 41-րդ հոդվածի պահանջներին և ոգուն համապատասխան, բացարձակ բնույթի են: Սա համապատասխանում է միջազգային իրավունքում վնասների հատուցմանը բնորոշ երկրորդական բնույթին: Պետության պատասխանատվության վերաբերյալ Հոդվածների նախագծի 41-րդ հոդվածի համաձայն.

«1. Միջազգայնորեն սխալ գործողության համար պատասխանատու պետությունը պարտավոր է փոխհատուցել դրանով պատճառված վնասը՝ այնքանով, որքանով, որ նման վնասը լավագույնս չի փոխհատուցված ռեստիտուցիայի միջոցով ...»:

Այդ իսկ պատճառով ճիշտ է, որ հնարավորության դեպքում Դատարանը պետք է ձգտի վերականգնել զոհի *stats quo ante* կարգավիճակը: Այդուհանդերձ, Դատարանը պետք է նաև հաշվի առնի, որ «Սխալ գործողության բոլոր հետևանքների վերացումը կարող է ... պահանջել, որպեսզի իրականացվեն լրիվ կամ մասնակի փոխհատուցման որոշ տեսակներ՝ կախված պատճառված վնասի ձևից և ծավալից» (տես՝ Զ. Մրոֆորդի գործը, Պետության պատասխանատվության առթիվ միջազգային իրավունքի հանձնարարականների հոդվածները, *Ներածություն, Տեքստ և Մեկնաբանություններ*, Քեմբրիջի համալսարանի մամուլ, 2002, էջ 211, (2)) և ներպետական մակարդակում հասանելի միջոցները (հոդված 41):

9. Ճիշտ է, պետությունները Կոնվենցիայի համաձայն պարտավոր չեն իրենց ներպետական իրավական համակարգերում ապահովել այնպիսի ընթացակարգեր, որոնցում իրենց Գերագույն դատարանների վճիռնը, որոնք հանդիսանում են *res judicata*, կարողանան վերանայվել: Այդուհանդերձ, խիստ ցանկալի է, որպեսզի նրանք այդպես վարվեն հատկապես քրեական գործերով:

10. Թուրքիայի քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1(բ) կետը նախատեսում է, որ ներպետական վարույթների վերանայումը, որոնք կողմնակալ են ճանաչվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, կարող է պահանջվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Այդուհանդերձ, այս դրույթի կիրառումը սահմանափակված է ժամկետով: 311-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ վերը նշված դրույթը չի կիրառվում այն դիմումների նկատմամբ, որոնք Մարդու իրավունքների եվրոպական դատարան են ներկայացվել մինչև 2003 թվականի փետրվարի 4-ը և այնպիսի վճիռների համար, որոնք ուժի մեջ են մտել մինչև 2003 թվականի փետրվարի 4-ը: Գտնում ենք, երբ, ինչպես որ այս գործում է, պատասխանող պետությունն ունի նման ընթացակարգ, Դատարանի պարտականությունն է ոչ միայն մեղմորեն առաջարկել, որ վերանայումը հատուցման

ամենապատշաճ տարբերակն է, ինչպես որ դա անում է 72-րդ հոդվածում, այլ Պատարանն այս դեպքում պարտավոր է շտապեցնել իշխանություններին կիրառել այդ ընթացակարգը, որքան էլ որ դա ոչ բավարար լինի, կամ իրականացնել առկա ընթացակարգերը, իհարկե, եթե այդպես է կամենում դիմողը: Այդուհանդերձ, դա իրավաբանորեն հնարավոր չէ, եթե մնան կոչն առկա չլինի վճռի էական նշանակություն ունեցող դրույթներում:

11. Դեռ ավելին, Պատարանն արդեն իսկ ներառել է այս բնույթի ուղեցույցներ վճիռների էական նշանություն ունեցող դրույթներում: Օրինակ, Կլաեսը և այլոք ընդդեմ Բելգիայի գործով (nos. 46825/99, 47132/99, 47502/99, 49010/99, 49104/99, 49195/99 և 49716/99, 2005 թվականի հունիսի 2) իր վճռի էական նշանակություն ունեցող դրույթների 5(a) կետում Պատարանը նշել է, որ «եթե Պատարանը դիմողների կողմից չի ստանում գործի վերամայման կամ նոր քննության խնդրանք, պատասխանող պետությունը պարտավոր է երեք ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ դիմողը նշում է, որ չի կամենում ներկայացնել նման խնդրանք կամ պարզ է դառնում, որ նա նպատակ չունի այդպես վարվելու կամ՝ այն օրվանից, երբ մերժվում է նման խնդրանքը» վճարելու ոչ նյութական վնասների, ծախսերի և ծախսերի համար սահմանված գումարները: Նման կերպ Լուսգոչին ընդդեմ Ռումինիայի գործով (թիվ 62710/00, 2006 թվականի հունվարի 26) Պատարանն իր վճռի էական նշանակություն ունեցող դրույթների 3(a) կետում վճռել է, որ «պատասխանող պետությունը պետք է Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած վեց ամսվա ընթացքում ապահովի, որպեսզի կատարվի գործի նոր քննություն, եթե այդպես է կամենում դիմողը, միաժամանակ պետությունը պետք է վճարի 5,000 եվրո (հինգ հազար եվրո) ոչ նյութական վնասի համար՝ ներառյալ բոլոր հարկերը, որոնք պետք է հաշվվեն ռումինական լեյով՝ փոխհատուցման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքին համապատասխան»:

12. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով Պատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողությունը Նախարարների կոմիտեի պարտականությունն է: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ Պատարանն այս առթիվ չունի որևէ դեր և չպետք է միջոցներ ձեռնարկի Նախարարների կոմիտեի՝ այս խնդրի լուծման հետ կապված գործառնությունների իրականացմանն օժանդակելու ուղղությամբ: Փաստորեն, Կոնվենցիայի 41-րդ հոդվածում կամ այլ հոդվածներում չկա որևէ բան, որը հետ կպահի Պատարանին լուծելու լրիվ հատուցման հարցերը՝ վերը նշված սկզբունքներին համապատասխան: Քանի որ Պատարանն իրավասու է մեկնաբանելու և կիրառելու Կոնվենցիան, այն նաև իրավասու է գնահատելու «կատարվելիք փոխհատուցման ձևն ու չափը» (տես՝ Ջ. Մորֆորդի գործը, էջ 201): Ինչպես պարզաբանվել է PCIJ-ի կողմից Չորզուի գործարանի գործով՝ «Փոխհատուցումը ... հանդիսանում է Կոնվենցիային չհետևելու պարտադիր հետևանքը ... (էջ 21)»:

13. Այս առթիվ կարևոր է, որպեսզի իր վճիռներում Պատարանը ոչ միայն հնարավորինս հստակ ներկայացնի Կոնվենցիայի հայտնաբերված խախտման բնույթը, այլ նաև պատասխանող պետությանը եզրափակիչ դրույթներում, եթե գործի հանգամանքները պահանջում են, ցույց տա խախտման հատուցման միջոցները, որոնք ինքը՝ Պատարանն է ամենահարմարը համարում:

ԴԱՏԱՎՈՐ ԶԱԳՐԵԲԵԼՍԿՈՒ ԴԵՏ ՀԱՍԱՏԵՂ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԿԱՍԱԴԵՎԱԼԻ ԵՎ ՏՅՈՒՐՄԵՆԻ ՀԱՍՆԵԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Վճռի էական նշանակություն ունեցող դրույթների օգտին ձայն տալով հանդերձ, կցանկանալի ավելացնել մի քանի խոսք՝ պարզաբանելու համար Դատարանի պատճառաբանության իմաստը, ինչպես որ ես եմ դա հասկանում:

Դատարանը գտավ, որ «տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(с) կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ մեկտեղ՝ ոստիկանությունում կալանքի տակ գտնվելիս դիմողի՝ իրավաբանական օգնություն չստանալու առթիվ» եզրափակիչ դրույթների 1-ին կետ): Այդպիսով, դա պատասխանում է դիմողի գանգատին առ այն, «որ պաշտպանության այս իրավունքը խախտվել է ... քանի որ իրեն չի տրամադրվել փաստաբան ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում»: Այդ գանգատը, որը դիմողի կողմից ներկայացվել է 6-րդ հոդվածի 3(с) կետի ներքո, առավել հստակորեն և ճիշտ ձևակերպվել է Դատարանի կողմից, որը կապել է դա 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ:

Գտնում եմ, որ Դատարանի վճռի իմաստը բավականաչափ հստակ է: Եթե առկա է որոշ չափով կասկած, այն ինչ Դատարանն ասում է 53-րդ կետում, 37-րդ հոդվածին հղում կատարելը կրկին ամեն ինչ դարձնում է պարզ: Միջազգային հանրաճանաչ չափանիշները, որոնք Դատարանն ընդունում է, և որոնք կազմում են իր նախադեպային իրավունքի կառուցվածքը, նախատեսում են հետևյալը. «Չդատապարտված բանտարկյալը բանտարկվելուն պես իրավունք ունի ընտրելու իր իրավաբանական ներկայացուցչությունը ... և իր պաշտպանության առիթով ունենալու հանդիպումներ իր իրավաբանական խորհրդատուի հետ և պատրաստելու ու հանձնելու, ինչպես նաև ստանալու նրանից խորհրդապահական ցուցումներ ...»:

Այդ իսկ պատճառով, ձերբակալման կամ կալանավորման հենց սկզբից պետք է հանցագործության կատարման մեջ կասկածվող անձն ունենա փաստաբանի օգնություն ստանալու հնարավորություն, ինչը պետք է իրագործվի ոչ միայն հարցաքննվելիս:

Քրեական վարույթի համատեքստում՝ հարցաքննության կարևորությունն ակնհայտ է, այդպիսով, ինչպես որ պարզաբանում է վճիռը, հարցաքննության ընթացքում փաստաբանի օգնությունից օգտվելու անհնարինությունը, որոշակի բացառություններով, հանգեցնում է արդար դատաքննության պահանջների լուրջ խախտման: Սակայն ձերբակալված կասկածյալի դեմ քննության արդարությունը նույնպես պահանջում է, որպեսզի նա կարողանա ստանալ (իսկ պաշտպանն էլ կարողանա տրամադրել) հատկապես իրավաբանական օգնության հետ կապված բոլոր տեսակի ծառայությունները, ներառյալ՝ գործի քննարկումը, պաշտպանության կազմակերպումը, կասկածյալի օգտին ապացույցների հավաքումը, հարցաքննությանը պատրաստվելը, վատառողջ լինելու դեպքում կասկածյալին օժանդակելը, նրա կալանքի պայմաններն ստուգելը և այլն:

Այդ իսկ պատճառով վճռից բխող իրավական սկզբունքն այն է, որ, որպես կանոն, չհաշված բացառիկ սահմանափակումները, ձերբակալված կասկածյալը ձերբակալման կամ կալանավորման սկզբից եթե ունի պաշտպան ունենալու իրավունք՝ իր պաշտպանությանը և իր օրինական շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելու նպատակով: Այդ հնարավորությունը չտրամադրելը, անկախ

հարցաքննությունների և դատարանների կողմից դրանց օգտագործման հարցից, որոշակի բացառություններով, հանգեցնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտմանը:

Կավելացնել նաև, որ, իհարկե, այն փաստը, որ պաշտպանը կարող է տեսնել կասկածյալին ոստիկանությունում կամ բանտում կալանքի տակ գտնվելու ընթացքում, առավել պատշաճ է, քան որևէ այլ միջոց, որպեսզի կանխվի Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքը:

Վերոհիշյալ դիտարկումներն անհրաժեշտ չէին լինի, եթե Դատարանի պատճառաբանությունը չպարունակեր հատվածներ, որոնք հուշում են ընթերցողին, որ Դատարանը պահաջում է, որպեսզի կասկածյալները պաշտպան ունենան միայն հարցաքննությունը սկսվելիս և դրա ընթացքում (կամ միայն հարցաքննության ընթացքում, որի պաշտոնական արձանագրությունը ներկայացվում է դատարանում որպես ապացույց օգտագործվելու համար): Նաև 55-րդ կետից Դատարանի կողմից ներկայացված տեքստը լիովին սևեռված է դիմողի՝ հարցաքննության ընթացքում ներկայացրած պատասխանների վրա, որոնք հետագայում օգտագործվել են նրա դեմ:

Գտնում են, որ վճռի նման ընկալումը չափազանց պարզունակ է: Ազատությունից զրկված կասկածյալի պաշտպանության համար Դատարանի վճռի կարևորությունը դրանով խստորեն կթուլանա: Եվ, կարծում են, դա անարդարացի է, քանի որ դիմողի հարցաքննության, ինչպես նաև դատարաններում նրա պատասխանների օգտագործման ձևի հետ կապված պատճառաբանությունը հեշտորեն բացահայտվում է Դատարանի շնորհիվ, որը հաշվի է առնում համապատասխան գործի փաստերը: